ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ 12

ք. Երևան 10.05.2023թ.

ՍՈՆԱ ԾԱՌՈՒԿՅԱՆԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅԱՆԸ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսչական մարմինների մասին» օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մասի 6.2-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2019 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ 17 որոշման հավելվածի 7-րդ կետի 4-րդ ենթակետը՝ Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կառավարման խորհրդը՝

ՈՐՈՇԵՑ

1. Հավանություն տալ Սոնա Ծառուկյանի թեկնածությանը՝ Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի պաշտոնում նշանակման համար:

2. Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կառավարման խորհրդի կողմից ՀՀ վարչապետին ներկայացնել առաջարկություն Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի պաշտոնում Սոնա Ծառուկյանին նշանակման համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ,
ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Վ. ՔԵՐՈԲՅԱՆ